



ՎԵՐԱՄՈՒՏ

Դպրոցին առաջին օրն է: Սահակ կը պատրաստուի մեկնիլ, երբ մայրը կը հարցնէ.
 - Ո՞ր կ'երթաս:
 - Դպրոց:
 - Բայց դեռ շատ փոքր ես,- կ'ըսէ մայրը եւ տան դռնէն զինք ներս կը բերէ:

Հայրը առաւօտեան կանուխ մեկնած էր անտառ, իսկ մայրը կը պատրաստուի իր գործերուն: Տան մէջ կը մնան Սահակն ու տատիկը: Սահակ կը ձանձրանայ, որովհետեւ տատիկը տակաւին կը քնանար, հետեւաբար, կը պատրաստուի դպրոց մեկնիլ:

Դպրոցը կը գտնուի Սահակին տան ետեւի կողմը, եկեղեցիին մօտ: Սահակ կը քալէ իրեն ծանօթ ճանապարհով ու կը հանդիպի շնիկներու, որոնք ոչ մէկ վնաս կը պատճառեն իրեն, որովհետեւ կը ճանչնան զինք: Բայց երբ կը հասնի անծանօթ փողոց մը, այնտեղի շուները կը սկսին հաշել ու ան հազիւ կը փորձէ վազել ու փախչիլ, անոնք կը սկսին հալածել զինք: Բարեբախտաբար, ճամբուն վրայ անծանօթ մարդ մը զինք կը պաշտպանէ վայրի շուներէն ու ետ կը հրէ զանոնք, ապա՝ հարց կու տայ անոր:

- Ո՞ր կ'երթաս, փոքրի՛կ տղայ:

Սահակ բան չի պատասխաներ ու կը շարունակէ վազել դպրոցի ճամբան:

Վերջապէս դպրոց կը հասնի: Մուտքին մարդ չկայ, սակայն փոքրիկներուն աղմուկը յստակօրէն կը լսուի: Կը սկսի մտահոգուիլ, որ եթէ ուսուցչուհին զինք ներս չ'ընդունի՝ ի՞նչ ընէ, ե՞տ վերադառնայ, հապա եթէ շուները զինք կրկին հալածեն...

Սահակ կ'որոշէ դպրոցին դուռէն ներս մտնել: Այնտեղ՝ բակը, կը տեսնէ բազմաթիւ աշակերտներ, որոնք կը ճչային ու կը խաղային, իսկ ուսուցչուհին՝ կը քալէր միջանցքէն:

- Ո՞վ ես Դուն,- կը հարցնէ ուսուցչուհին Սահակին:

Սահակ լուռ ու մունչ գլխարկը բռնած, չի պատասխաներ:

- Այո՛, այո՛, դուն, ո՞վ ես:

Սահակ տակաւին լուռ է: Ան այնքան կը վախնայ, որ չի կրնար բառեր արտասանել:

- Եթէ պիտի չխօսիս, տուն գնա՛:

Սահակ կ'ուզէ խօսիլ, բայց վախէն կոկորդը կը չորնայ: Ան կը նայի ուսուցչիին ու կը սկսի լալ: Ուսուցիչը կը խղճայ, ապա գլուխը շոյելով կը հարցնէ աշակերտներուն, թէ ո՞վ է այս փոքրիկը: Ներկաներէն մէկը կը պատասխանէ.

- Ան Արմիկին եղբայրն է: Շատո՛ւնց կ'ուզէր դպրոց գալ, բայց մայրը թոյլ չէր տար, որովհետեւ տակաւին փոքր է: Իսկ հիմա գաղտնի եկած է:

- Եկ'որ, նստէ՛ քրոշո՞քով, ես ալ մօրմէր կը խնդրեմ, որ քեզի դպրոց յաճախելու արտօնութիւն տայ:

Ուսուցիչը Սահակին ցոյց կու տայ Այբուբենը, սակայն ան արդէն ծանօթ էր բոլոր տառերուն: Մինչեւ իսկ քիչ մըն ալ կարդալ գիտէր:

- Անունդ կրնա՞ս վանկատել:

Սահակ կ'ըսէ.

- ԽՎԷ-Ի-ԽՎԻ, ԼԷ-Ի-ԼԻ, ԱՂԿ-ԱՂԿ:

Բոլորը կը սկսին ծիծաղիլ:

- Ապրի՛ս,- կ'ըսէ ուսուցիչը,- ո՞վ քեզի կարդալ սորվեցուցեր է:

- Արմիկը: Ես շատ խելացի եւ տաղանդաւոր եմ, դիրին կը սորվիմ:

Ուսուցիչը կը ծիծաղի ու կ'ըսէ.

- Ինքզինքդ մի՛ գովեր, աւելի լաւ կ'ըլլայ, որ սկսիս աւելի շատ սորվիլ:

Այդ օրուրէն Սահակ աշակերտներուն հետ դպրոց կը յաճախէ:



ԹԻՒՆ ԴԱՏԱՏՄԱՆՆԵՐ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇԽԱՏԱՆՆԵՐ ԿԱԶՄԵՆՆԵՐ
 ՆԿԱՐԱԶԱՐՈՒՄԵՆ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՐՈՒՄԵՆ


Գրե՛ իրաքանչիւր ժամացոյցին տակ ժամանակը:



Եկե՛ք միասին գծէնք այս գորտիկը, ապա՝
գունաւորենք զայն:



Օգնե՛ փոքրիկին, հասնելու
դպրոցական մէքենային:



+ ԹԷ՞ -

$4 \bigcirc 3 = 7$

$1 \bigcirc 8 = 9$

$6 \bigcirc 2 = 4$

$5 \bigcirc 1 = 6$

$8 \bigcirc 4 = 4$

$7 \bigcirc 2 = 5$

ՓԻԿԼԵԹ ԽՈՉՈՒԿԸ

Փիկլեթ խոզուկը շատ զբաղած էր իր տունը մաքրելով. ան երկար աւելով մը գետինը կ'աւլէր:

Յանկարծ սաստիկ հով մը փչեց պատուհանէն ներս եւ տան չորս կողմը ծածկեց աշնան տերեւներով:

Փիկլեթ աճապարանքով տան պատուհանը փակած միջոցին, նշմարեց Փուհ արջուկը, որ հեռուէն զինք կանչելով, կ'ըսէր.

- Դուրս եկո՛ւր, որպէսզի միասին խաղանք:

- Չեմ կրնար,- ըսաւ Փիկլեթ,- գետնի տերեւները աւլելով զբաղած եմ: Կը կարծեմ, որ ամբողջ օրը այս գործով ժամանակ պիտի անցընեմ:

Փիկլեթ հազիւ գործի վերսկսած էր, յանկարծ դուռը լայնքին բացուեցաւ:



- Փիկլեթ, ո՛հ, ո՛չ,- բացագանչեց Փուհ արջուկը, տեսնելով աշնան նոր տերեւներու դռնէն ներս մտնելը:

- Ո՛հ, սիրելի՛ս,- ըսաւ Փուհ արջուկը,- այս բոլոր տերեւները հաւաքելով պէտք է դուրս թափեմ:

Բ ա յ ց հ ա զ իւ ա ն պատուհանը բացաւ, դուրսէն տերեւները ներս մտան եւ զարնուեցան Փիկլեթի երեսին:

- Փ ո խ ա ն ա կ ն եր ս ի տերեւները դուրս թափելու, դուրսինները ներս բերի,- ըսաւ Փուհ:

- Ո՛հ, լա՛ւ,- ըսաւ Փիկլեթ,- եկո՛ւր աշնան տերեւներուն մէջ մի ա ս ի ն ուր ա խ ա ն ա ն ք , որովհետեւ այս է բարեկամութեան նպատակը:

ՏԱՆՁԸ

Տանձին հայրենիքը կը համարուի Պարսկաստանի հիւսիսային շրջանը, նաեւ՝ Հիմալայան լեռնաշղթային հիւսիս-արեւմտեան շրջանը, ուրկէ փոխադրուած է Եւրոպա՝ 1000-ական թուականներուն:

Տանձենին բրգածէ է: Ուղիղ եւ գորաւոր աճում ունեցող ծառ մըն է, հասակը 25 մէթրի կը հասնի: Իսկ տերեւները հակթածէ են եւ փայլուն-կանաչ գոյն ունին: Տանձենին մինչեւ երկու հարիւր տարի կրնայ ապրիլ: Ան կը դիմանայ ձմեռուան սաստիկ ցուրտին, առանց որեւէ վնասի, ինչպէս նաեւ ամրան բարձր աստիճանի տաքութեան:

Տանձին գոյնը խնձորին նման արեւուն ճառագայթի շողերէն կ'ազդուի, ուստի՝ մաշկին կարմիր գոյնը աւելի կը յստականայ երբ պտուղները արեւուն ճառագայթը ստանան աւելի երկար ժամանակ:

Տանձը կը քաղուի երբ դեռ կանաչ է եւ անոր կարծրութիւնը լաւագոյն նշաններէն է, որ արդէն հասունցած է:

Տանձը կը պարունակէ 85% ջուր, 0.3% սպիտակուց, 0.2% ճարպային նիւթեր, 14% շաքար, առաւել քալսիւմ, երկաթ եւ C, B1, B2, B3 կենսանիւթերը:

